

Գողթի ծննդեան 100-ամեակի առթիւ

Սեւրոյջ Ռուսաստանը ցնծաթեամբ ամենաբարձր աստուած է՝ այսօր իւր ամենասիրելի ընտանեկանները (1) մէկի՝ Գողթի ծննդեան 100-ամեակը: Եւ այդ ոչ միայն նորա՝ Ռուսաստանի իրաւունքն է, այլ և սրբազան պարտականութիւնը, ինչպէս և ամեն մեղքի, յաւիտեան կենդանի սրահել իւր անցեալ գործիչները յիշատակը, որոնք այս կամ այն ստպարիղին նախընտրով, զարի են տուել ընդհանուր ազգային կուլտուրայի զարգացմանը:

Ինչպէս գիտենք Գողթը գործել է գրական ստպարիղում: Սակայն ինչո՞ւմն է կայանում նրա գրական գործնէութիւնը և հանճարի մեծութիւնը, որոնք այնքան սիրելի են գարծբել նրան ինչպէս ամէն մի ուրիշ մարդու: այնպէս և իւրաքանչիւր գեղարուեստ դիւստաստի համար:

Փորձենք մօտենալ բուն խնդրին:

Գողթը ծնունդ է մի երկրի, որի ընտանեկան գիրքն ու պատմական անցեալը անսպառ նիւթ ու ոգևորութիւն են մատակարարել երիտասարդ բանաստեղծի բեղմնաւոր գրչին: Օժտուած լինելով կարեւոր գիտելու և գեղարուեստօրէն արտայայտելու կարողութեամբ, նա շատ անգամ է երեւակայութեամբ սաւառնել իւր հայրենիքի՝ Մալարուսիայի կանաչազարդ մարգերի, ընդարձակ արօտների և գեղածիժաղ տափաստանների վրայով, մտել կուրտիան ընտեթեան գրիւմ սպրոգ հայրենակիցների բոլոր խաւերը, կենդանի արտայայտութեամբ տուել նոցա յարաբերութիւնների, նիւտ ու կացի, վարք ու բարքի պատկերը: Եւ այդ բոլորը բանաստեղծի մտք երեւակայութեամբ ու հանճարի թափով արտայայտել այնպիսի ֆունի վրայ, ուր իւրաքանչիւր գէպը և անձն գեղարուեստական գունաւորումն ստանալով միևնոյն ժամանակ չեն հեռացել իրական կեանքից՝ իրենց բուն աղբիւրից: Իրական կեանք ենք ասում. ըայց պէտք է նկատենք, որ այդ իրական կեանքը իւր միայն մի՞ բացասական կողմով է սիւթ գարծել Գողթի գրչին, որովհետեւ նրա տաղանդն ու ձիրքը ընդունակ է եղել կեանքի այդ կողմը գիտելու և այդ կողմի հարազատ պատկերը տալու:

Ն. Վ. Գողթը ծնուել է 1809 թ. մարտի 19-ին Պալտաւայի նահանգի Սարտչինցա ավանում: Ընտանեկան դաստիար-

1) «Բանաստեղծ» բառը ինչպէս այստեղ, այնպէս և շարունակութեան մէջ գործենք ամուսն իւր լայն իմաստով:

բակու թիւնն ստացել է անմիջապէս իւր ծնողներից, որոնք վերին աստիճանի քնքոյշ և զգայուն սրտի տէր լինելով, ընդհանրապէս ներհրամիտ էին վերաբերում դէպի փոքրիկ նիկուլայի (Այսպէս էին կոչում ասնր ապագայ բանաստեղծին) աշխոյժ բնաւորութիւնից առաջացող մանկական շարածճիութիւնները: Մտողների այս ձևի վերաբերմունքը թէ լաւ և թէ վատ ազդեցութիւն ունեցաւ մանկան բնաւորութեան կազմակերպման վրայ—մի կողմից հնարաւորութիւն տալով ազատ զարգանալու նրա մէջ եղած արտահարք ընդունակութիւններին, միւս կողմից՝ նրան ինքնահաւան, մեծամիտ և նոյն իսկ ետառէր գարձնելով: Սակայն ոչ այնքան հօր, (հայրը շուտ է վախճանուում), որքան մօր ազդեցութիւնն է նկատուում նրա վրայ, որից նա իւրացնում է նուրբ և զգայուն հոգի լի կրօնական զգայմունքներով:

Տանն սկսած ուսումը Գոգուլը շարունակում է նեժինի Նորաբաց գիմնազիայում, ուր մանոււմ է նա 1821 թ. դիմնազիայի բացուելուց մի տարի յետոյ: Գարոցական կեանքի առաջին տարիներում նա շատ քիչ բանով էր հետաքրքրւում և ուսման մէջ էլ համարեա յաջողութիւն չունէր. բայց յետոյ, երբ սկսում են աշակերտական ներկայացումներ տրուել, նա առանձնապէս հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի բեմը և յահալս մասնակցում այդ ներկայացումներին, յաջողութեամբ տանելով վերցած դերերը:

Դեռ գալոցը չաւարտած նա իւր անպագայ գործնէութեան մասին լուրջ մտածել է և միշտ այն համոզման եղել, թէ ինքը պարտաւոր է հասարակական որ և է անպարիզի համար օգտակար անգամ լինել, երբէք չկարողանալով հաշտուել այն մտքի հետ, թէ կարող է պատահել, որ ինքն ևս շատերի նման, որոնց նա «դոյակներ» է անուանում, ապրի միայն իւր համար, իւր շահերով տարուած: Ինչպէս տեսնում ենք դեռ աշակերտական նստարանի վրայ եղած ժամանակից նրա մէջ դարձել է հատարակութեան օգտակար լինելու զգացումը շատ զօրեղ, բայց անորոշ կեպով:

1828 թ. աւարտելով գիմնազիան, նա իւր առաջ բայէ տեսնում գործելու շատ ասպարէզներ՝ թատրոն, դրական գործնէութիւն, պետական ծառայութիւն, որոնք հաւասարաչափ գրաւում էին նրան: Եւ նա հասարակութեան շահերին ծառայելու յարմարագոյն ասպարէզը ընտրելով վերջինը, նոյն թուի դեկտեմբերին այդ նպատակով ուղևորւում է մայրաքաղաք: Բայց, ի մեծ գարմանս իւր, չի գտնում մայրաքաղաքում այն բնդունելութիւնը, ինչ որ ինքն էր սպասում և շատ դժուարութիւններ ի հանդիպելուց յետոյ հաղիւ կարողանում է ձեռք

բերել ցանկալի պաշտօնը: Սակայն կարճ ժամանակից յետոյ տեսնելով, որ այդ ասպարէզն անկարող է բաւարարութիւն տալ իւր մէջ զարթնող ալի բարձր հոգեկան պահանջներին, որոշում է դիմել աւելի պատասխանատու աշխատանքի: Իրին ծանօթ ռումանալիական ուղղութեամբ մշակելով իր անգրանիկ աշխատութունը, «Гансъ Кюхелгартенъ» հրատարակում է յաջորդ 1829 թ: նոր ընտրած ասպարիզում նա հենց առաջին քայլն անելիս մեծ հիասթափութեան է հանդիպում, երբ ժամանակի ազդեցիկ լրագրներից մէկում «Съборная Пчела»-ում լոյս է տեսնում այդ գրքոյի քննադատութիւնը, որով գրքոյի համարում է ահա, չմտածուած ու չմշակուած: Չկարողանալով տանել այս ծանր վերաւորանքը, նա անմիջապէս հաւաքում է լոյս տեսած գրքի բոլոր օրինակները և ոչնչացնում: Բայց պէտք է նկատել, որ երբէք յուսահատական մաքեր չեն ծնում նրա մէջ. այլ ընդհակառակը այս անյաջողութիւնը մի տեսակ խթան է դառնում, որ երիտասարդ բանաստեղծն աւելի լուրջ և քննադատօրէ վերաբերուի դէպի իր ապագայ աշխատութիւնները:

Այնուհետև շարունակում է գրել մի քանի պատմուածքներ ևս, որոնք ապում են Բարոն Դելվիզի հրատարակութեամբ լոյս տեսող «Съверныя цвѣты» և «Литературная газета» ամսաթերթերում: Այս աշխատութիւններով Գոգոլը իւր վրայ է դարձնում Բարոն Դելվիզի ուշադրութիւնը, որը ժամանակի խելօք և բարեսիրտ մարդկանցից լինելով միաժամանակ և գրականութեան մէջ որոշ դիրք ունէր: Բարոն Դելվիզի միջոցով Գոգոլը ծանօթանում է ժուկովսիու և պրոֆեսոր Պլեանեօվի հետ, որոնք երիտասարդ գրողի մէջ նկատուող ընդունակութիւնները գնահատելով, աշխատում են իրենց խորհուրդներով ու ցուցմունքներով ապահովել նրա դիրքը և նիւթական որոշ յարմարութիւններ տալ: Շուտով Գոգոլը ծանօթանում է նաև Պուշկինի հետ, որի բարեացակամ վերաբերմունքն սկզբից և եթ նկատելով, մինչև իւր կեանքի վերջն էլ սերտ կերպով կապուած է մնում նրա հետ:

Այդ ժամանակները լոյս է տեսնում Գոգոլի մի աշխատութիւնը՝ «Вечера въ хуторѣ близь Диканки», որով միանգամայն որոշում է նրա դիրքը գրական ասպարիզում, հիմք դնելով նաև ապագայ մեծ փառքի: Այս դիրքը հիացմունք է պատճառում թէ ժամանակի գրական գործիչներին և թէ հասարակութեան կիսագրագէտ մասին, որով արդէն սկսուած էր հեղինակի այն հանրօրում գործը, որի մասին նա դեռ աշակերտական նստարաններից էր երազում:

Իւր այս սկզբնական փորձերի ընթացքում (1829—1831) Գոգոլն ընդարձակ ծանօթութիւն է ձեռք բերում, ինչպէս արդէն տեսանք, ասպարեիլի վրայ եղած գրական գործիչների այն շրջանի մէջ, որի գլուխ կանդնած էին Պուշկինի ժուկովսկի, Պլեանեով և ուրիշները: Ահա այս շրջանն է, որ այնքան մեծ գեր է խաղացել Գոգոլի ներքին աշխարհի կազմակերպման և ձևաւորման վրայ:

Իբրև կրտսեր անդամ Պուշկինեան շրջանի, նա իւր առաջ տեսնում է այնպիսիներին, որոնց բնականաբար պիտի աշակերտէր: Եւ իրօք, մենք տեսնում ենք, որ Գոգոլի կարծիքը տեսական բոլոր ինդիւրների վերաբերմամբ ոչնչով չէր աւարելում այն ընդհանուր կարծիքներից, որոնք ընդունուած էին այդ շրջանում: Գոգոլին շրջապատողները իրենց վերաբերմունքով մի տեսակ հրապոյր էին ներշնչել նրան, որոնց անկեղծութեանն ու ճշմարտութեանը չվստահել չէր կարող: Բայց սա դեռ չէ նշանակուած, որ Գոգոլը իր հայեացքները պիտի փոխ առնէր նոցանից. այլ դա տեղի է ունենում, որովհետև ինքը Գոգոլը չունէր խաղմակերպուած ու հիմնաւորուած հայեցքներ այս կամ այն խնդրի մասին, որոնցով կարողանար դէմ դուրս գալ հակառակորդներին, ուսեցած փաստերով իրենք պաշտպանելով: Այսպիսի դէպքում անշուշտ կամայ թէ անկամայ նա պիտի աշակերտէր այդ շրջանին, որի դերը 30-ական թուականներին Ռուսաց գրականութեան մէջ շատ մեծ է եղել: Այս շրջանի անդամներն արդէն իրենց մշակուած, հիմնական հայեացքներն ունէին թէ տեսական և թէ գործնական խնդիրների նկատմամբ: Այ այնքան տեսականին, որքան գործնականին վերաբերեալ կարծիքները կարող են մեզ հետաքրքրել, որոնց մասին պարզ գաղափար կազմելու համար բաւական է յիշել Պուշկինի «Поэты и черны» ոտանաւորը, որից պարզ երևում է թէ նոցա գրական ուղղութիւնը որ աստիճանի ժամանակակից կենսական նշանակութիւն ունեցող հարցեր կարող էր շօշափել, մատչելի և օգտակար հանդիսանալով հասարակութեան լայն խաւերի համար: Եւ մենք տեսնում ենք, որ այդ ուղղութիւնը, թէև բարձր, բայց միևնոյն ժամանակ կարող էր բաւարարութիւն տալ իրեն՝ բանաստեղծի սրտի զգայուն լարերին և հոգեկան բարդ պահանջներին, միանգամայն անհասկանալի լինելով շրջապատի հաղարար մարդկանց համար, որոնցից բանաստեղծն իրեն անհամեմատ աւելի բարձր է ճանաչում: Բանաստեղծութեան և հասարակ ժողովրդի յարաբերութեան մասին ունեցած այսպիսի հասկացողութիւնից են բխում նաև այդ շրջանի նեղ, պահպանողական հայեացքները հասարակա-

կան և քաղաքական զանազան հարցերի վերաբերմամբ, երկրպագող հանդիսանալով տիրող գրութեանը, պետական կազմին: Եւ եթէ տիրող կարգերի մէջ երբեմն պակասութիւններ էին նկատուած, այդ էլ վերագրուած էին ժողովրդի անբարեգործ լինելուն և օրէնքը ճշտութեամբ չկատարելուն:

Ահա այսպիսի ուղութեան աէր մարդկանց հետ է սկսուած Գողգոթը իւր մտերիմ յարաբերութիւնները, որոնց բարեացակամ և հոգատար վերաբերմունքը նրան աւելի և աւելի են կապում իրենց հետ և իրենց հայեացքները վստահելի ու պաշտելի կացուցանում երիտասարդ գրողին: Սակայն այն մեծ ինքնուրոյնութիւնը և Ռուսաց գրականութեան մէջ բռնած անկախ դիրքը, որով նա, սեպտեմբերի վերջնականապէս հաստատողը և ամենամեծ ներկայացուցիչն է հանդիսանում, բացատրուած է այն հանգամանքով, որ նրա բնական ազանդը բոլորովին հակառակ բնաւորութիւն կրելով, բոլորովին հակառակ արդիւնքներ էլ առաջացրել է, քան արտաքին այդ ազդեցութիւնները:

Մինչև 1832 թ. մայրաքաղաքում անցկացնելուց յետոյ նա նոյն թուականի ամառը կարողանալով ազատ ժամանակ գրանել, մի փոքրիկ շրջագայութիւն անելով Մոսկուայի վրայ հայրենիք է վերագաւանում, որը ավրալի վիճակի մէջ գտնուելով, ախար տպաւորութիւն է գործում և Գողգոթի սրտի վրայ: Այստեղ նա անձամբ տեսնում է թէ ի՞նչպիսի քայքայման գրութեան մէջ է կալուածատէր դատակարգը, չկարողանալով արնտեսել իւր կալուածները. ի՞նչպէս ժողովուրդը զանազան չինովնիկներն ու աէրերի իշխանութեան տակ բթանալով, կորցրել է մարդկային հոգու բոլոր վեճութիւնը: Թէև այս բոլորը առաջ էլ կային, բայց նա անչապահաս լինելով անկարող էր քննութեան ենթարկել. իսկ այժմ որպէս 23 տարեկան մի հասուն երիտասարդ, օժտուած հանճարեղ բանաստեղծին յատուկ գիտելու կարողութեամբ, բնգունակ էր արդէն երևոյթներն խորքը թափանցել և մարդկանց բարդ հոգեբանութիւնը վերլուծելով էականն ըմբռնել: Այս բոլոր գիտողութիւններն ու ուսումնասիրութիւնները նրա բեղմնաւոր գրչին նիւթ են դառնում, որոնք գեղարուեստօրէն մշակուելով ըստ են տեսնում «Миргородъ» խորագրով, շարունակութիւն կազմելով «Вечера на хуторѣ близъ Диканки»-ի:

Չնայած որ Գողգոթն այստեղ ևս մշակութեան նիւթ է դարձնում կեանքի բացասական կողմերը իրեն յատուկ ստախբական սճով նկարագրելով և ծիծաղ պատճառելով ընթերցողին, բայց այդ այն ծիծաղն է, որի տակ քննադատները «Թագ-

նուաժ արատուներ» են դանում: Այնպէս որ այս ժողովածուի մէջ թէև ամենից աւելի ուրախ բնաւորութիւն կրում է «Повѣсть о томъ, какъ поссорился Иванъ Ивановичъ съ Иваномъ Никифоровичемъ»-ը, բայց պատմութիւնը վերջանում է հետևեալ տխուր և ճնշող տողերով. «Скучно на этомъ свѣтѣ, Господа!»

Նրա գրուածքների կրած այս փոփոխութիւնը շատ բնական է, որովհետև նոյնպիսի փոփոխութիւն առաջացել էր և նրա հոգեկան աշխարհում: Մայրաքաղաքում արդէն նա ճաշակած լինելով կեանքի դառնութիւնը, կորցրել էր իւր նախկին վառ երազներով լի յոյսերը, որոնք նրա սիրտը լցնում էին ուրախ արամադրութեամբ: Խռովայոյզ կեանքում ունեցած անմիջական մասնակցութեամբ զրացել էր նրա արտաքին խաբուսիկ երեսի տակ թագնուած տխուր տրագիկոմը, որը շատ քչերն են տեսնում: Բանաստեղծի հոգեկան այս արամադրութիւնը իւր անմիջական ազդեցութիւնն է անում նաև նրա յետագայ միւս աշխատութիւնների մէջ, որտեղ կեանքում փերող բացասական կողմերը հարուածող բովանդակութեան ուրախ բնաւորութեամբ արտաքինի տակ միաժամանակ թագնուած ենք տեսնում իրեն՝ բանաստեղծին, միշտ թախծոտ և միշտ ցաւակցոտ:

— Կարճ ժամանակից յետոյ նա հրատարակում է մի այլ ժողովածու «Арабески» խորագրով, որն իբրև մի թարմ ծաղիկ աւելանում է նրան պսակող ծաղկեփնջի վրայ: Ահա ժամանակի ամենանշանաւոր քննադատ Բելինսկու կարծիքը Գոգոլի մասին, երբ դեռ միայն նրա յիշեալ աշխատութիւններն էին լոյս տեսել:

«Գոնէ այժմ նա ներկայանում է իբրև գլուխ գրականութեան, գլուխ բանաստեղծների, նա կիանդնի այն տեղում, որ բաց է մնացել Պուշկինից յետոյ ... իսկ այժմ ցանկանանք, որ այս հիանալի տաղանդը երկար փայլի մեր գրականութեան երկնակամարի վրա, որպէս զի նրա գործունէութիւնը հաւատարուի նրա ուժին»:

1836 թ. ապրելի 19-ին Պետերբուրգի Ալէքսանդրեան թատրոնում ներկայացւում է անմահ «Ревизоръ»-ը, որով միանգամայն մերկացւում էր ժամանակի գաւառական պաշտօնեաների մտաւոր ու բարոյական անկեալ վիճակը: Ներկայացումը խիստ ազդեցութիւն է գործում հանդիսականների վրայ, ոչ թէ մտաւոր, գեղարուեստական բաւարարութիւն պատճառելով, այլ նոցա զայրոյթն ու զզուանքը շարժելով դէպի այդ ցնդաբանութիւնը, որը լի է շինծու, անարժէք և վիրաւորական

տեսարաններով ու միջադէպերով: Եւ դա շատ բնական էր, որովհետեւ նախ որ հասարակութիւնը իւր մէջ ունէր կեղծ կլասիկական դժեր, որով պահանջուում էր պիետոսից գլխաւորապէս դրական տեսքեր արտայայտել, մինչդեռ «Ревизоръ»-ի մէջ բոլոր գործող անձինք բացասական բնաւորութիւնների մի համագումար էին կազմում, և երկրորդ՝ մայրաքաղաքի բոլոր պաշտօնեաները միեւնոյն ախտերով վարակուած լինելով, ինչ «Городничій», «Хлестаковъ» և ուրիշները, ջղաձգական դրութիւն էին ստանում, երբ բեմի վրայ կենդանի կերպով տեսնում էին իրենց գլխով անցած պակասութիւններից շատերը և ականջով լսում հեղինակի կծու հեղինակներ: Սակայն հասարակութեան այս սառը վերաբերմունքը և պաշտօնեաների հայհոյանքները չեն վճատեցնում Գոգոլին, որն իր մէջ «առիւծի ոյժ» զգալով, պատրաստուում է մի աւելի զօրեղ պայքարի, ձեռնարկելով «Мертвья души»-ի ստեղծագործութեանը:

Սակայն մտաւոր աշխատանքներից ու երկար լարուածութիւնից յոգնած, նա վճռում է մեկնել արտասահման հանգստացնելու իր ընդարմացած ու յոգնատանջ ջղերը: 1836 թ. անցնում է Գերմանիա, այնտեղից Չուիցերիայի վրայով Փարիզ, ուր սկսում է լեզուներով պարապել և կարդալ Եւրոպական նշանաւոր հեղինակների երկերը իրենց բնազդի վրայ: Լուրջ կերպով սկսում է մշակել իւր ձեռնարկած մեծ աշխատութիւնը, որի առթիւ Փարիզից հետեւալն է գրում ժուղովրդական»... Եւ ինձ միանգամայն թւում է թէ ես Ռուսաստանումն եմ. իմ առաջ ամեն ինչ մերն է. մեր կալուածատէրերը. մեր չինովնիկները, մեր սպաները, մեր մուժիկները, մեր խրճիթները...» նրա այս եռանդուն աշխատանքը մի առժամանակ ընդհատուում է, երբ լսում է իր ամենամօտիկ ընկերոջ և սիրելի ուսուցչի՝ Պուշկինի մահը:

1837 թ. մարտին Գոգոլը Հռոմ է տեղափոխուում, ուր ձօն բնութիւնը և մեղմ կլիման բարեբար ազդեցութիւն են անում նրա թոյլ կազմուածքի վրայ, միանգամայն և լուրջ պարապելու արամազրում: Նրա այս շրջանի նամակներից դատելով, տեսնում ենք, որ իր կեանքի ամենամեծ խնդիրն է դարձրած եղել «М. П.»-ն, որի յաջող լուծման համար ոչ մի միջոց չի խնայել: Ահա թէ ի՛նչ է գրում այս առթիւ նա ժուղովսկուն, «Եթէ վերջացնեմ այս ստեղծագործութիւնը այնպէս, ինչպէս պէտք է այն վերջացնել, այն ժամանակ... լ՛նչ խոշոր, ինչ բնորո՛շ նիւթ, լ՛նչ բազմազան կոյտ, ամբողջ Ռուսաստանն է պատկերանալու նրա մէջ: Սա կլինի իմ անդրանիկ շնորհալի գործը, գործ, որ պիտի հռչակի իմ անունը»:

Բայց ինչո՞ւմն է կայանում այս գրքի առաւելութիւնը միւսների նկատմամբ, որն ամենայն իրաւամբ Քոզոլի աշխատութեանց թագ ու պսակն է կազմում: Այս հարցին բաւարութիւն տուած կլինենք, եթէ նկատենք, որ այստեղ ժամանակի իրական կեանքն է պատկերացրած հեղինակի ստեղծագործող հանձարին յասուկ ամենակատարեալ գեղարուեստական արտայայտութեամբ, որը դնահատոււմ է բոլոր քննադատներին:

Սակայն դժբախտաբար սրանից յետոյ Քոզոլը չի կարողանում նոյն ուղղութեամբ շարունակել իւր դրական գործնէութիւնը, շնորհիւ մի շարք ներքին հոգեկան փոփոխութիւնների, որոնք զօրանում են դիւսաւորապէս նրա փիլիսոփայական հիւժուած դրութեան պատճառով: Ֆիզիքական քայքայումը իւր անմիջական և խորը ներգործութիւնն է տնենում նրա հոգու վրայ: Քոզոլը, որ մանկութիւնից ի վեր կրօնական զգացմունքներով լցուած էր, հիւանդութեան ազդեցութեան տակ շուտով մեղամաղձատ միստիկական կեանքի մէջ է ընկնում և իւր սփոփանքը միայն ազօթքների մէջ գրանում: Այսպիսի դրութեամբ նա մի յետադարձ հայեացք ձգուելով իւր անցեալ գործնէութեան վրայ, տեսնում է, որ իւր դերը եղել է միայն կեանքի բացասական կողմերը մերկայանելը, մեջան, որ խորթ պիտի լինի ճշմարտութիւն քարոզող բանաստեղծի համար: Այսպէս վարուելով, նա կարծում էր թէ կարելի կլինի ժողովրդին ինքնագիտակցութեան բերել. այնպէս որ կալուածատէրերը այլ ևս չեն ճնշիլ իրենց ճորտերին, իշխանաւորները կգաղարեն կաշառակերութիւնից, դատաւորներն արդար կգաթեն ևլն: Նրա մտքով մի ըսպէ անգամ չէր անցնում, որ այդ բոլորը տեղի կունենան այն ժամանակ, երբ կփոխուի ամբողջ վարչական մեխանիզմը, որի հետ նաև հասարակական շատ կարգեր: Ահա թէ հոգեկան որպիսի տրամադրութիւններ են գրգռում նրան դէպի գործ, երբ մի փառաւոր օր մենք տեսնում ենք «Мертвые души»-ի, «Ревизорь»-ի և նման անմահ երկերի աէր Քոզոլին, հրաժարուած այդ բոլորից, պետական բարոյախօսի դեր ստանձնած գրում է. «Выбранные места из переписки с друзьями»-ն. մի դիրք, որ տարով կեանքի դրական կողմի իդեալականացրած պատկերը, անհամեմատ աւելի օգտակար պիտի լինէր հասարակութեան համար, քան մինչև այդ եղած բոլոր աշխատութիւնները: Սակայն այս գրքի հրատարակութիւնից յետոյ Քոզոլը ոչ միայն սպասած յաջողութիւնը չի գտնում, այլ և յանդիմանական նամակներ ստանում շատերից: (Ընդհանրապէս պէտք է նկատել,

տել, որ Քոզուլին երբէք չի յաջողում գրական տիպեր հանել): Ներքին այսպիսի մի արագիզմ տեղի է ունենում Քոզուլի մէջ շնորհիւ այն հանգամանքի, որ նա իւր բնատուր հանճարի ազատ Թուիչքի համապատասխան կրթութիւն, դաստիարակութիւն և արասքին ազդեցութիւններ չունենալով, իւր կեանքի բնթացքում ձեռք է բերում այնպիսի տեսական հայեացքներ, որոնք արամագծօրէն հակառակ են եղել նրա էութեան ամենակոշոր մասին՝ բանաստեղծական աաղանդին: Եւ ահա հոգեկան այս երկու կողմերի անհամապատասխան լինելն է, որ նրան իւր կեանքի վերջին օրերում այսպիսի արագիզական դրութեան մէջ է ձգում և ամենալերջին փորձն ևս անել տալուց յետոյ բերում այն եզրակացութեան, որ ինքն արդէն ուժասպառ է եղած, հեռեապէս և անկարող է որ և է օգտակար գործ կատարել:

Այսպիսի տխուր վիճակում վախճանում է Քոզուլը 1852 թ. փետրուարի 21-ին:

Շատ մեծ և կարեւոր է Քոզուլի դերը Ռուսաց գրականութեան մէջ: Նա իւր հանճարով վերջնականապէս հաստատում է սեպչիտական ուղղութիւնը, դառնալով միաժամանակ և այդ ուղղութեան ամենամեծ ներկայացուցիչը, որին այնուհետև աշակերտում են շատերը թէ՛ ժամանակակիցներից և թէ՛ յետագաներից:

Յնահատելով աաղանդաւոր բանաստեղծի վեհութիւնը, մենք ևս խոնարհւում ենք նրա անմուսոյ յիշատակի առաջ:

Ազէլ Արահամյան.

(Աւսանող Քէորգեան ձեմարանի Բ. լսարանի)

Օգտուել եմ հետեւեալ աղբիւրներից

1. Собрания соч. Н. В. Голя подъ ред. А. Кирпичникова.
2. Собрание соч. В. Г. Бѣлинскаго
3. Характеристики литературныхъ мнѣній А. Пышина
4. Біографія Гоголя В. Шенрокъ

Այրի առաջ եմ ունեցել նաև պ. Մինաս Բերբերյանի զաստիօսութիւնները Քոզուլի մասին:

